ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

13.12.2017Թ. ԿՆՔՎԱԾ N «ՀՀ ՖՆ-ԲՄԾՁԲ-17/4» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ WWW.PROCUREMENT.AM ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄԱՏ ՌԵԺԻՄՈՒՄ ՌՈՒՍԵՐԵՆ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան <<22>> դեկտեմբեր 2017թ

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի դեմս ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավար Է. Գևորգյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Պատվիրատու>>, մի կողմից, և «Ավռոմիկ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Օհանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության և համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և 13.12.2017թ կնքված N «ՀՀ ՖՆ-ԲՄԾՁԲ-17/4» գնման պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ 7.5 կետով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով՝ կողմերը **որոշեցին**

1.1 Հաստատել Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ծառայությունների մատուցման նպատակով ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի /կցվում է/:

1.2 Պայմանագրի գումարն ամբողջությամբ Պատվիրատուն կփոխանցի Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար, եթե Կատարողը ներկայացնի կանխավճարի ապահովում՝ բանկային երաշխիքի ձևով: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

2. Այլ պայմաններ

2.1. 13.12.2017թ. կնքված N «ՀՀ ՖՆ-ԲՄԾՁԲ-17/4» ծածկագրով գնումների պաշտոնական www.procurement.am ինտերնետային կայքում հրապարակվող գնումների վերաբերյալ տեղեկատվության ավտոմատ ռեժիմում ռուսերեն և անգլերեն լեզուներով թարգմանության ծրագրային ապահովման ծառայությունների ձեռքբերման պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են հայերեն լեզվով, երկու /2/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և տրվում են Կողմերին:

2.3 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ֆինանսների նախարարություն	«Ավռոմիկ» ՍՊԸ
ք. Երևան, Մ. Ադամյան 1	ՀՀ, ք. Երևան, Դրոյի փ. 12 շենք, բն. 40
ՀՎՀՀ՝ 02629081	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011017101	Հ/Հ 20522220671110001
ՀՀ ՖՆ աշխատակազմի	ՀՎՀՀ 00888275
գործառնական վարչություն	Տնօրեն
ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար	
_____ Է. Գևորգյան	_____ Ա. Օհանյան
/ստորագրություն/	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված
13.12.2017թ. կնքված N «ՀՀ ՖՆ-ԲՄԾՁԲ-17/4» ծածկագրով
պայմանագրում փոփոխություններ կատարելու նպատակով
<<22>> դեկտեմբեր 2017թ կնքված համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
	48741100/320	Գնումների պաշտոնական www.procurement.am ինտերնետային կայքում հրապարակվող գնումների վերաբերյալ տեղեկատվության ավտոմատ ռեժիմում ռուսերեն և անգլերեն լեզուներով թարգմանության ծրագրային ապահովման ծառայություն												69600000	69600000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ՝ 02629081
Հ/Հ 900011017101
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար
_____ Է. Գևորգյան
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Ավռոմիկ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Դրոյի փ. 12 շենք, բն. 40
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2052222067111001
ՀՎՀՀ 00888275
Տնօրեն
_____ Ա. Օհանյան
/ստորագրություն/
Կ.Տ.